

**«Հայաստանի Հանրապետության կառավարության  
2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման մեջ  
փոփոխություններ և լրացում կատարելու մասին»  
ՀՀ կառավարության որոշումների նախագիծ**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

\_\_\_\_\_ 2022 թվականի N \_\_\_ - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
27-Ի N 707-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին N 707-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման վերնագրում «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ» բառերը փոխարինել «ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ» բառով, իսկ «ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՆՐ» բառերից հետո «,2ԳԱԼԻ, ԽՈՇՈՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱԴԵՍ ԽՈՇՈՐ» բառերը հանել.

2) որոշման նախաբանում 266-րդ, 273-րդ և 275-րդ բառերը փոխարինել 393-րդ, 394-րդ, 404-րդ և 405-րդ բառերով.

3) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետից հանել «,զգալի, խոշոր և առանձնապես խոշոր» բառերը.



978. MMBA(N)-073 կամ (ADB-B [1,2,4]տրիագոլո[4,3-a][1,4]դիագեպին (1-բուլբիլ-N-(1-կարբամիլ-2,2-դիմեթիլպրոպ-1-իլ)-1H-ինդազոլ-3-կարբոքսամիդ) 0.01-0.05
979. UTINACA) MMBA(N)-019 1-հեքսիլ-N-(1-կարբամիլ-2,2-դիմեթիլպրոպ-1-իլ)-1H-ինդազոլ-3-կարբոքսամիդ) 0.01-0.05
980. 173-979-րդ կետերում ներառված թմրամիջոց(ներ) 173-979-րդ կետերում նախատեսված կրող կամ պարո նյութ(ներ): Քանակը որոշվում է՝ մակողբուսակա ընդհանուր զանգվածով +110-1150C և ջերմաստիճանի պայմաններում չորացնելով հաստատուն քաշը ստանալուց հետո:
- զանգված կամ այլ կրիչ:

»:

8) որոշման N 3 հավելվածի վերնագրից հանել «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

## Հայաստանի Հանրապետության

վարչապետ  
Ն.Փաշինյան

\_\_\_\_\_ 2022թ.

«\_\_\_\_»

ք.Երևան